

5. ՆՈՐ-ԿԱՆՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

19-րդ դարու երկրորդ կիսուն, Գերմանիոյ մէջ, Նիւթապաշտական (Materialism) եւ Դրապաշտական (Positivism) փիլիսոփայական ուղղութիւններու որպէս հակաշարժում, յառաջացաւ *Նոր-Կանտականութիւնը* (Neo-Kantianism), «ետ՝ դէպի Կանտ» („back to Kant“) նշանաբանով: Այս նոր ուղղութիւնը, որ 1880 – 1930 թուականներուն իր փիլիսոփայական կարեւոր ներդրումով յիշատակութեան արժանի է, ունեցաւ երկու թեւ, ներկայացուած երկու տարբեր գերմանական դպրոցներով.- Մարբուրգեան եւ Բադէնեան դպրոցները:

➤ Մարբուրգեան դպրոցը

Այս դպրոցը կոչուած է գերմանական Մարբուրգ (Marburg) քաղաքի անունով. իր գլխաւոր ներկայացուցիչները կը հանդիսանան, գերման փիլիսոփաներ՝ **Հ. Կոհէն** (Hermann Cohen, 1842 – 1918 թ.), **Պ. Նատորպ** (Paul Natorp, 1854 – 1924 թ.) եւ **Է. Կասիրեր** (Ernst Cassirer, 1874 – 1945 թ.):

Մարբուրգեան դպրոցը կը ծանրանայ գլխաւորաբար Կանտի ճանաչողութեան տեսական փիլիսոփայութեան եւ մասնաւորաբար անդրանցական (Transcendental) դրութեան վրայ:

Յիշեալ փիլիսոփաներէն Կոհէն, նաեւ իր իւրայատուկ բարոյագիտական տեսութիւնը ունի, որ կը տարբերի Կանտի ձեւապաշտական ու պարտագիտական բարոյագիտութենէն: Կոհէնի համաձայն, նաեւ կրօնի հիմքը բարոյագիտութիւնն է:

➤ Բադէնեան դպրոցը

Այս դպրոցը կոչուած է Հարաւային Գերմանիոյ Բադէն (Baden) շրջանի անունով. իր գլխաւոր ներկայացուցիչները կը հանդիսանան գերման փիլիսոփաներ՝ **Վ. Վինդելբանդ** (Wilhelm Windelband, 1848 – 1915 թ.) եւ իր սերտ աշակերտը՝ **Հ. Ռիկերտ** (Heinrich Rickert, 1863 – 1936 թ.):

Բադէնեան դպրոցի ուշադրութեան կեդրոնը՝ արժեքաբանութիւնն (Axiology) է, Կանտի անդրանցական (Transcendental) դրութեան համապատասխան: Օրինակ, Ռիկերտի համաձայն, տրամաբանութեան գերագոյն արժեքը՝ ճշմարտութիւնն է, բարոյագիտութեան գերագոյն արժեքը՝ բարին, գեղագիտութեան գերագոյն արժեքը՝ գեղեցիկը իսկ կրօնի գերագոյն արժեքն է՝ սրբութիւնը: Վինդելբանդ եւ Ռիկերտ կը զանազանեն երկու աշխարհներու միջեւ, մէկ կողմէն՝ բնութեան առարկայական աշխարհը (բնական գիտութիւններու կամ բնագիտութեան ոլորտ, գերմ.՝ Naturwissenschaft, անգլ.՝ Natural Sciences) եւ միւս կողմէն՝ արժեքներու անդրանցական աշխարհը (մարդասիրական գիտութիւններու կամ բանասիրութեան ոլորտ, գերմ.՝ Geisteswissenschaft, անգլ.՝ Human Sciences կամ Humanities): Յիշեալ երկու աշխարհները, սակայն, կը միանան արժեւորող անհատի կամ ենթակայի (Subject) իմաստի կենսագործման աշխարհին մէջ: